Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի ԹԻՎ 137, ԱՊՐԻԼԻ 12-Ի ԹԻՎ 138, ԱՊՐԻԼԻ 13-Ի ԹԻՎ ԹԻՎ 139-143, ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ ԹԻՎ 144-146 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 137-146 որոշումների հերթական համարներից անմիջապես հետո անհրաժեշտ էր նշում կատարել որոշման իրավական ակտի բնույթի մասին։

Թիվ 137 որոշման վերնագրում և բովանդակության մեջ «ձևավորելու» բառի փոխարեն անհրաժեշտ էր գրառել «սահմանելու» բառը։

Թիվ 138 որոշման հղումը անհրաժեշտ էր կատարել ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշման 1-ին կետով հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ կետին։ Որոշման 2-րդ կետում ուժը կորցրած ճանաչվող իրավական ակտի լրիվ անվանումը չի գրառված։ Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի՝ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտում գրառվում է գործողությունը դադարեցվող իրավական ակտի լրիվ անվանումը։ Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ենթաօրենսդրական իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը։

Բացի այդ, որոշման մեջ «ենթակայության» բառը փոխարինել «սեփականության» բառով (հիմք՝ ՀՀ հողային օրենսգիրք, 5-րդ հոդվածի 1-ին մաս)։

Թիվ թիվ 145 և 146 որոշումների հղումը ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությանը թերի է գրառված։ Որոշումների 2-րդ կետերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին, համաձայն որի անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ։

18.05.2022 թ.